ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ

Մայիսի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հայրերի մասնակցությամբ Մայր Տաճարում, Իջման Ս. Մեղանի առջև, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1918 թ. Սարդարապատի ճակատամարտի հերոսների:

Պատմական այս ճակատամարտը շրջադարձային եղավ հայ ժողովրդի կյանքում՝ դնելով Հայաստանի առաջին Հանրապետության հիմքերը:

«Մենք հավատում ենք, որ հայ ժողովրդի հաղթանակների շարքը, որ իմաստ և բովանդակություն է հաղորդում հայ ժողովրդի անկախությանը, կշարունակվի նաև պատմության նոր ժամանակներում»,- արարողության ավարտին դիմելով ներկաներին, ասաց Տ. Շահե արքեպս. Աճեմյանը՝ հորդորելով շարունակել հայոց պատմության հերոսների գործը եկեղեցաշինությամբ ու հայրենաշինությամբ:

Անուրանալի է Ս. Էջմիածնի և հոգևորականության դերը պատմական այս ճակատամարտում: Հուսահատ ու անելանելի թվացող իրավիճակում, երբ Հայաստանի ժամանակի պատասխանատուները հորդորում էին Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսին թողնել Մայր Աթոռն ու ավելի ապահով վայրեր մեկնել, Հայոց Հայրապետը, հակառակ այդ հորդորների, ռազմի կոչով եռանդ ու ոգի հաղորդեց հայ ժողովրդին: Ռազմի զինվորներ դարձած հոգևորականները Սարդարապատի դաշտում Ս. Խաչը ձեռքներին առաջնորդեցին մահապարտների գունդը՝ ապահովելով պատմական հաղթանակը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ